

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 2016 առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատանքների կազմակերպման առաջին նախապայմանը ոլորտի տեղեկատվական շտեմարանի թարմացումն է, որն իրականացվում է յուրաքանչյուր տարվա սկզբին: Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում 2016 թվականի 1-ին կիսամյակում կատարվել է մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 20 երեխայի կարիքի գնահատում, նրանց վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվել է «Նորք» տեղեկատվական կենտրոնում: Ըստ ուսումնասիրության՝ մարզում 2016 թվականի առաջին կիսամյակում հաշվառված է 118 հաշմանդամ երեխա, որից եղեգնածորում՝ 75, Վայքում՝ 30, Ջերմուկում՝ 13-ը:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի եզրակացության և մարզպետարանի վկայագրման հիման վրա 2016թ. առաջին կիսամյակում վկայագրվել է 2 և վերավկայագրվել 22 երեխա:

Մարզի տարածքում հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնացված հաշվառման է վերցվել տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա, սոցիալապես անապահով 2 երեխա ուղղորդվել է ՀՕՖ-ի երեխայի աջակցության կենտրոն, կենսաբանական ընտանիք է վերադարձել 2-ը, բաժնի աջակցության շնորհիվ գիշերօթիկ հաստատության 2 աշակերտի տրամադրվել է ամառային ճամբարի ուղեգիր:

Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են՝ 2016 թվականի ընթացքում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվող 4 անչափահաս դուրս է եկել հաշվառումից: Իրավունքների պաշտպանության նպատակով բաժինը մասնակցել է 4 իրավախախտի գործի հարցաքննության: ՀՀ Ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի №3837 – Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիկինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով իրականացվել են հանդիպումներ, զրույցներ մարզի ուսումնական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և համայնքներում: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ, շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված երեխաներ:

Համայնքներ է ուղարկվել շրջաբերական նամակ՝ ծննդի պետական գրանցում չունեցող երեխաներին բացահայտելու համար: Ստացված տեղեկատվության հիման վրա մարզում ծննդյան վկայական չունեցող երեխաներ չկան:

Տնային այցելությունների, համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համատեղ աշխատանքների շնորհիվ մարզի 37 ընտանիքների տրվել է խորհրդատվական, դրամական և նյութական աջակցություն մարզպետարանի, հասարակական կազմակերպությունների, անհատ անձանց կողմից:


Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը կողորդինացնում է գենդերային հիմնահարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքները՝ կիսամյակում հրավիրվել է 2 նիստ:

Բաժինը սերտորեն համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող մարզային և միջազգային հասարակական կառույցների («Շուշան», «Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն», «Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն», «ՀՕՄ»-ի Եղեգնաձորի մասնաճյուղ, «Երեխաների պաշտպանության ցանց >>, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն>>, «ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ>>, «Սեյվ դը չիլդրեն>>») հետ, մասնակցել նրանց կազմակերպած հանդիպումներին, աջակցել մարզում իրականացվող ծրագրերի ներդրմանն ու կլոր սեղանների անցկացմանը, օգտագործել նրանց հնարավորությունները՝ 17 սոցիալապես անապահով ընտանիքների աջակցություն տրամադրելու գործում:

ԸԿԵԻՊ բաժինը մասնակցել է Վայոց ձորի մարզի 8 համայնքների վարչական հսկողության աշխատանքներին, ժամանակին և սահմանված կարգով քաղաքացիներից ստացած 10 դիմումներին տվել համապատասխան լուծում:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի
ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների

պաշտպանության բաժնի պետ՝



Ա. Գրիգորյան